ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/06, 16.04.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Լիանա Կաչյանց» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցում, քիմիական նյութերի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

1.Դադարեցնել «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ի «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019թ. մարտի 22-ի թիվ 4 արձանագրության թիվ 3-րդ կետով հրավերի թիվ 38-րդ չափաբաժնի մասով «Լեյկո» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ի «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ-ի «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 38-րդ չափաբաժնի մասով «Լեյկո» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ <<ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ >> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Բաշինջաղյան 176/32
էլ. փոստ՝ liana-kachyants@rambler.ru

Հեռ՝ 091-10-13-13

Պատվիրատու՝ <<Քանաքեռ-Զեյթուն>> ԲԿ ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան , Ներսիսյան 7

Գնանշման հարցման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
<<Քանաքեռ-Զեյթուն>> ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար
<<Քիմիական նյութերի ձեռք բերում>> ձեռքբերման նպատակով հայտարարված
«ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ

ԲՈՂՈՔ

- Բողոքի նախապատմությունը և փաստերը՝

<< Քանաքեռ-Զեյթուն>> ԲԿ ՓԲԸ-ն <<Քիմիական նյութերի>> ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասին /փաստաթղթային ձևով/ , որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019թ. մարտի 04-ի N 2 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1. էջեր՝ 1 և 2), որի հրավերի թիվ 38-րդ չափաբաժնով պահանջվում է. << Ախտահանիչ խառնուրդ >> 1լ տարողությամբ՝ 30 հատ (կից փաստաթուղթ թիվ 2, էջեր՝ 1 և 2):

2019թ. մարտի 18-ին կայացած նիստում «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կազմել է թիվ 3-րդ արձանագրությունը, որի թիվ 3-րդ կետով <<ԼԵՅԿՈ>> ՍՊԸ-ի հայտում հրավերի թիվ 38-րդ չափաբաժնի մասով առանձնացված տողով ԱԱՀ-ի գծով հաշվարկել է վճարվելիք գումարի չափը (կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 1,2)

2019թ. մարտի 22-ին կայացած նիստում «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կազմել է թիվ 4-րդ արձանագրությունը, որի թիվ 3-րդ կետով հրավերի թիվ 38-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել <<ԼԵՅԿՈ >> ՍՊԸ-ին (կից փաստաթուղթ թիվ 4, էջեր՝ 1 և 2):

2019թ. մարտի 26-ին <<ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ>> ՍՊԸ-ն դիմել է «ՔԶԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և տեղեկացրել, որ <<ԼԵՅԿՈ >> ՍՊԸ-ի հայտը հրավերի թիվ 38-րդ չափաբաժնի մասով կազմված է գնումների գործընթացները կանոնավորող մի քանի իրավական ակտերի պահանջների խախտումներով, ուստի ենթակա է մերժման: (կից փաստաթուղթ թիվ 5, էջեր՝ 1-3)

- Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները՝

1) Համաձայն <<Արտաքին Տնտեսական Գործունեության Ապրանքների միասնական Անվանացանկ>>-ի ախտահանիչ միջոցները դասվում են 380894 դասակարգիչով՝

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտք՝ 13807
28 03 19

ԲԱԺԻՆ V I Քիմիական և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք

հաշվարկելը չի համապատասխանում 22 <ԱԱՀ-ի մասին> օրենքի թիվ 15 հոդվածի 6-րդ կետի սահմանումների պահանջներին:

4) Համաձայն 22 Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման թիվ 67 կետի սահմանումների՝ <<Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:>>

Ելնելով վերոգրյալից՝ 22 գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Դադարեցնել <<Քանաքեռ-Զեյթուն>> ԲԿ ՓԲԸ-ի «ՔՋԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019թ. մարտի 22-ի թիվ 4 արձանագրության թիվ 3-րդ կետով հրավերի թիվ 38-րդ չափաբաժնի մասով <<ԼԵՅԿՈ >> ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը, և, ղեկավարվելով <<Գնումների մասին>> 22 Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝ պարտավորեցնելով <<Քանաքեռ-Զեյթուն>> ԲԿ ՓԲԸ-ի «ՔՋԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու <<Քանաքեռ-Զեյթուն>> ԲԿ ՓԲԸ-ի «ՔՋԲԿ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 38-րդ չափաբաժնի մասով <<ԼԵՅԿՈ>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում:

- Կից ներկայացնում եմ բողոքարկման վճարի անդորրագիրը:

Առոիր՝ 11 թերթ:

<<ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ >> ՍՊԸ տնօրեն ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ

29 մարտի 2019թ.